գլխագնի համեմատ, թէ ի՞նչ օժիտ պիտի տայ աղջկայ հայրը։ Սակայն գլխագնի գումարը հետզհետէ զգալի կերպով փոքրանում է և ընդհակառակն մեծանում է օժիտի գումարը։ Մի քանի դիւղերում գլխագնի սովորութիւնը սկսել է բոլորովին վերանալ։ Նոյն իսկ պատահում է, որ երիտասարդ փեսացուները, առաւելապէս օտար մեծ քաղաքներում արդէն եղածները, իրենք են աղջկայ հօրից փող պահանջում, բայց շատ քչերն են համաձայնում տալ [1])։

Նոյնն է կատարւում Վարանդայում, որտեղ գլխագնի քանակը որոշելուց յետոյ, փեսացուի կողմն է ձայն բարձրացնում և պահանջում է օժիտ, որ չափւում է տղայի կողմից տուած գլխագնի գումարի քանակով [2])։

Վերջին երկու օրինակներից կարելի է տեսնել, որ շատ դաւառներում օժիտը դարձել է արդէն մի անհրաժեշտ պահանջ, յետ մղելով գլխագնի տալու սովորութիւնը, որ յիրաւի այդպիսի տեղերում սկսում է վերանալ և դառնալ մի մեռած ծէս, հոգեւարքի մէջ ընկած մի սովորութիւն. և ընդհակառակն՝ այն դաւառներում, որտեղ ինչպէս օրինակ՝ Սիսիանում, բաշլըդ կարելու կամ գլխագնի սովորութիւնը ծաղկում է խիստ պահպանողութեամբ, այնտեղ օժիտի սովորութիւնը միանգամայն բացակայում է։

Այսպէս ուրեմն առաջ բերած համեմատական փաստերից եզրակացւում է այն կարծիքը, որ մենք այս գլխի սկզբում յայտնել էինք. գլխագնի գումարը, որ սկզբներում անցնում էր աղջկայ հօր (ընտանիքի) ձեռքը, աստիճանական զարգացմամբ փոխարկւում է օժիտի։ Աղջկայ հայրը փեսացուից ստացած գումարը փոխանակ իրեն սեփականութիւն դարձնելու, գործադրում էր յօգուտ հարսնացուի, որի համար պատրաստւում էր պահանջելի օժիտը։

---

[1]) Եր. Լալայեան—Զանգեզուր Բ. հատ. եր. 72.

[2]) Նոյն—Վարանդայ, եր, 127.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան